Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 22-ի N 1783 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 1-ի N515-Ա – N524-Ա, 2022 թվականի հուլիսի 4-ի N525-Ա, N526-Ա, 2022 թվականի հուլիսի 6-ի N527-Ա - N533-Ա, 2022 թվականի հուլիսի 7-ի N534-Ա - N535-Ա, 2022 թվականի հուլիսի 8-ի N536-Ա, 2022 թվականի հուլիսի 11-ի N537-Ա - N548-Ա, 2022 թվականի հուլիսի 12-ի N549-Ա - N550-Ա որոշումների վերաբերյալ.

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N516-Ա որոշման 1-ին կետը չի համապատասխանում որոշման վերնագրին:
2. N517-Ա որոշման 1-ին կետը չի համապատասխանում որոշման վերնագրին, բացի այդ որոշման նախաբանում հղումը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթին թերի է գրառված:
3. N515-Ա, N518-Ա, N523-Ա, N530-Ա և N542-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներին:
4. N546-Ա որոշման վերնագրում և բովանդակությունում բնակավայրի անվանումը տարբեր է գրառված:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
16 օգոստոսի 2022թ

.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 1-ի թիվ 517-Ա, 2022 թվականի հուլիսի 6-ի թիվ, թիվ 527-Ա, 529-Ա և 531-Ա որոշումների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 1-ի թիվ 517-Ա որոշման մեջ ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանված վճարման ենթակա գումարի հաշվարկը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912 որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինում>> կարգի 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետերին և ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված Արևշատ համայնքի համար սահմանված հողամասերի և շինությունների տարածագնահատման գոտիականության գործակիցներին:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 6-ի թիվ 527-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման>> կարգի 25-րդ կետի պահանջներին:

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 6-ի թիվ, թիվ 529-Ա և 531-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Զ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կատարող՝ Օ. Մխիթարյան
28.07.2022 թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 1-ի № № 516-Ա, 517-Ա, հուլիսի 4-ի № № 525-Ա, 526-Ա, հուլիսի 7-ի № 534-Ա, հուլիսի 11-ի № № 537-Ա, 546-Ա-548-Ա որոշումների վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի թվականի հուլիսի 11-ի № 546-Ա որոշման վերնագրում նշված բնակավայրի անվանումը տարբերվում է որոշման տեքստում նշված բնակավայրի անվանումից, կատարել համապատասխան ուղղում (Մեծ Մանթաշ կամ Փոքր Մանթաշ):

2022 թվականի հուլիսի 1-ի № № 516-Ա, 517-Ա, հուլիսի 4-ի № № 525-Ա, 526-Ա, հուլիսի 7-ի № 534-Ա, հուլիսի 11-ի № № 537-Ա, 547-Ա, 548-Ա որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

ԽՍ. ԽՆԶՐՑՅԱՆ

Կատարող Արմենուհի Մկրտչյան
Հեռ. (0312) 49000*166